

շղթաները: Մայր իմ, հրամայիր, որ շուտով, շուտով ճանապարհուենք... Թագաւոր—և շղթայակապ: Օհ, շուտով, շուտով:

Օթար-բէկ. (վր կենալով) Իսկոյն, արքայ:

Էրեկլէ. Ես—արքայ: Ես: Ես կը խելագարուիմ:

Ջէյնար. (Ակամայ ցնցուելով) Անանիս, պահպանիր սրան այսօր էլ, ինչպէս պահպանել ես այս քսան տարին:

Անանիս. Կը պահպանեմ, Թագուհի: Հաւատան ինձ—կը պահպանեմ:

Ջէյնար. (Աչքերը սրբելով) Գնանք, Օթար: Մնան բարով, գաւակս: Մնան բարով, իմ շունչ ու արիւնս: Աստուած կը պաշտպանէ իր ծառային: (Գնում է):

III

Օթար-բէկ. Պահակներ, շրջապատեցէք կալանաւորներին: Գիգան, (Գիգան եւ պահակները մօտ են զալիս) դու կառաջնորդես: (Խորհրդաւոր եղանակով): Տղերք, պահպանեցէք սրանց... և չմոռանաք իմ հրամանը: Մենք ճանապարհ ենք ընկնում: (Գուրս է զնում: Մինչև որ պահակախումբը նորից շրջապատում է էրեկլէին եւ Անանիային, բեմի ետեւից լսում է): Հեծէք ձիերդ: Վերջին տարածութիւնն ենք անցնում: (Երկինքը սաստիկ ամպում է: Մութ է կոխում: Որոտմունքն աւելի ու աւելի սաստկանում է: Բեմի ետեւից լսում է ճանապարհող զօրքի աղմուկն ու աղաղակը: Բեմով անցնում են եսփնջիներով ու չորեքականերով մարդիկ՝ ոմանք արագաքայլ, ոմանք վազէվազ, Աջ կողմից, կիրճի խորքից դուրս գալով՝ նրանց հետ խառնւում է Ռուքայան՝ վրան երկայն եսփնջի եւ զլխին բաշլըդ, որը ծածկում է նրա երեսի կէսը):

Ջայներ բեմի ետեւից. Ձի նստէք: Պահակներ, բեռների մօտ անցէք: Թագուհու ձին բերէք: Կանանց սայլերը շրջապատեցէք:

Օթար-բէկի ծայնը. Ի՛նչ—Սաւող, մարդկանցդ ան ու առանջ ընկիր ճանապարհը դիտելու: (Ջայներն իրար խառնուելով՝ մի ընդհանուր աղմուկի են փոխւում, որից քան չի հասկացւում: Լսում են ձիերի տրոփին, սայլապանների զոռում-զոչում, զէնքի շառաչին):

Բեմի վրայ—առաջին ծայնը խորքից. Օ, մի լաւ անձրեւ չկերած՝ տեղ չպիտի հասնենք:

Երկրորդ ծայն. Ի՛նչ տեղ է ձիուս սանձը:

Երրորդ ծայն. Սոսիկօ, ձիս բռնիր, ջուր առնեմ:

Չորրորդ ծայն. Շուտ արան, ձիու գլխից տողալակը հանիր, ջան որդի: (Բեսօն բեմի աջ կողմից ծախ կողմն անցնելու ժամանակ՝

դիպչում է Ռուբայային: Հէնց այդ միջոցին պահակախումբը դուրս է տանում գերիններին):

IV

Բեսօ. (Տկծորն ու կապոցը ձեռին՝ ընդհարուելով Ռուբայային) Հէյ, բարեկամ, չե՞ս լսել, Օթար-բէկը հօ չէ՞ր կանչում Բեսօյին:

Ռուբայա. (Արագ վազելով դէպի գինետան աւերակները) Ո՛չ:

Օթար-բէկի ծայնը. Ի՞նչ տեղ է Բեսօն: Հէյ, Բեսօ: (Կանչում են՝ Բեսօ):

Բեսօ. Այստեղ է, տէր իմ, այստեղ է Բեսօն: Բոլոր ժամանակ քեզ էի ման գալիս: (Ռուբայան մի կողմն է քաշւում, մինչև որ պահակախումբն անցնում է, ապա խոտնւում է ամոխսին):

Գիգա. (Ահեղ ծայնով) Հէյ, տղերք, հեռու կացէ՛ք, այստեղ գերիններն են: (Արով շրջան է քաշւում): Դէն քաշուեցէ՛ք: (Որոտմունքի ուժգին հարուած. տաստիկ մթնում է):

Օթար-բէկի ծայնը. (Բեմի ետեւից) Գիգա:

Աղադակները բեմի ետեւից. Գիգա, տէրը քեզ կանչում է: Գիգա. Այստեղ եմ, տէր իմ:

Օթար-բէկի ծայնը. Գերիններին պահպանելու Գիշերը վրայ է հասնում: (Չայնը հեռանում է: Լսւում է մտրակների շրթակլորխկոց եւ ծիւղորների զոչումներ: Բեմի վրայ մնում են մի խումբ պահակներ եւ Ռուբայան):

Գիգա. Դիխովս պատասխանատու եմ սրանց համար, տէր իմ: (Ռուբայան ներս է պրծնում գինետան աւերակները հւ թաղնւում է: Աղմուկը հետզհետէ հեռանում ու խլանում է հետեւեալ տեսարանի ժամանակ):

Գիգա. (Կիսածայն) Շղթաներդ արձակել է՞ք:

Անանիա (Շշնչալով) Արձակել ենք:

Գիգա. (Հնդնպէս շշուկով) Պառկեցէ՛ք թիփերի մէջ: Վերջին շարքերն են անցկենում: Դէհ, շուտով: Սուրբ Գէորգը ձեզ փրկէ ու ազատէ: (Բարձրածայն) Սեղմ շրջապատեցէ՛ք գերիններին: Միացէ՛ք զօրախմբին: (Խմբի հետ հեռանում է: Բեմը դատարկ է երեւում: Գինետան աւերակների ծախ կողմը պահուած է Ռուբայան: Աջ կողմը, կիրճի թիփերի մէջ, թաղուատ մտած՝ պառկած են Գախան եւ Էրեկլէն: Կուլիսների ետեւից աւելի ու աւելի թոյլ է լսւում ընթացող զորքի աղմուկը: Մթնում է: Լսելի է հեռաւոր, բայց երկարատեւ եւ ուժգին որոտմունք):

V

Դաթօ. (Դուրս գալով Թփերի ետեւից՝ մօտենում է թաղնուած քղբօրն ու հօրը) Հայր...

Դլախա. (Արագ) Դաթօ:

Էրեկլէ. (Նոյնպէս) Եղբայր:

(Դուրս գալով ու գում է դուրս գալ, բայց մարդիկ նկատելով՝ մի. խուլ ու թեթիւ ծիչ է արձակում եւ դարձեալ թաղնուում):

Դաթօ. (Արագ) Մթնադէմին միացայ զօրախմբին. տեսնող չեղաւ: Մերոնք ամենքն էլ մէկ-մէկ մօտեցել ու բերդը շրջապատել են:

Դլախա. Շատ են:

Դաթօ. Թիւ ու համար չկայ: Ամենքն էլ գալիս են: Ամեն բան թողնում ու գալիս են: Մենակ մեր տեղերից հազարաւորներ են եկողները: Օթաւն էլ մեր կողմն է: Համա, օյի՜ն ենք խաղալու գլխներին, հա՛ւ (Ուրախ ու կամացուկ ծիծաղում է):

Էրեկլէ. Դու բերդը կը մտնես:

Դաթօ. Թագունու զօրաբաժնի հետ: Սիրտս չի. համբերում. կրակ կտրած՝ վառում է. ուզում եմ աւելի մօտիկ լինել: Մերոնք ներս կը թափուեն, հէնց որ Մետելը կը պայթի: Ո՞վ է բերդը պայթեցնելու, չգիտէք:

Էրեկլէ. Ես ու հայրս:

Դաթօ. (Նախանձով) Ինձ էլ առէք հետներդ:

Անանիա. (Բարկունեամբ) Կորիք, քանի գլուխդ չեն թռցըրել: Առանց էն էլ, բիչ մնաց տուններս բանդէիր, գիժ մողի: Ի՞նչ ես էստեղերը քաշ գալիս:

Դաթօ. Դժոժ կայ, հայր: Բերդումն էլ գործ կը լինի: Մնաք բարով: Պիտի շտապել, հետները խառնուել, քանի չեն հեռացել: Կը տեսնուենք երբ խաղն սկսուի: (Դուրս է վազում):

VI

Անանիա. Արքայորդի, առ վառօդի պատրոյգը: Էդպէս մէկն էլ ես ունեմ: Դիզան տուաւ, իշխանից է ստացել: Արեթ ու կայծքար կմայ մօտդ:

Էրեկլէ. Միշտ գօտիիցս եմ կախած:

Անանիա. Մ... Կամանց խօսիր: Ազմուկը դադարում է: Ետ մնացած մարդիկ կը լինեն, կը լսեն:

Էրեկլէ. Գնանք լաստի կողմը:

Անանիա. Վաղ է: Մենք լաստ կը նստենք, երբ բոլորովին մթնի, որ ափից տեսնող չլինի: Մի ժամ չի քաշի, Թիֆ-

լիս կը հասնենք: Իսկ զօրախմբի հասնելը՝ երկու ժամ կը քաշի: Էնպէս պիտի անել, որ զօրքը մեզանից առաջ տեղ հասնի: Լաստի վրայ մարդիկ կը լինեն: Լսիր ինձ, քանի մենակ ենք: Էրեկլէ. Լսում եմ:

Անանիա. Լաստից մենք ցած կը գանք Մետեխի քարափի մօտերքում ու լող տալով կը հասնենք նրա ոտորոտը: Էդ տեղում գետը շատ վարար է, բայց ես ու դու շատ անգամ ենք լող տալով անցել Արագվան՝ ամենավարար ժամանակը: Պատրոյգը, արէթն ու կայծքարը գդակիդ մէջ պահիր, որ չթըրջուեն:

Էրեկլէ. Լաւ:

Անանիա. Քարափով մենք սուս ու փուս կը բարձրանանք ու կը մօտիկանանք թփերով ծածկուած անցքին: Մեր ծերունիներից անգամ շատ քչերը գիտեն, որ Էդպէս մի անցք կայ: Նա գետնի տակով դէպի Մետեխի տաճարն է տանում: Էդ ճամբով ես քեզ դուրս տարայ, երբ Սիւլէյմանը մտնում էր Թիֆլիս ու քո մահն էր ուզում: Էդ ճամբով էլ մենք պիտի վերադառնանք հիմա՝ նրա կորստեան գիշերը:

Էրեկլէ. Եւ ես նրա ձեռքից դուրս կը կորզեմ նրան:

Անանիա. (Շուարած) Ո՞ւմ:

Էրեկլէ. (Ուշքի գալով) Ո՞ւմ: Մօրս:

Անանիա. Էդպէս, Էդպէս, արքայորդի. Թէ մօրդ, Թէ ամբողջ ժողովուրդդ: Ժամանակ է, ժամանակ էլ, Հայ ու մաշ եղան խեղճ ժողովուրդդ: Հնա, ականջ դիր: Երբ որ պատրոյգը կպցնես, նոյն ճամբով էլ դուրս վազիր: Ես կը հասնեմ քո տեկից: Ասենք, իմ հոգսը մի արա: (Տնողում է պատոյգը): Սրա վառուելը մի կէս ժամ կը քաշի. Էդ ժամանակի կէսն էլ բաւական է, որ մենք վտանգից ազատուենք: Մենք գետը ղեղաճ կտրելով՝ լող կը տանք. հոսանքը մեզ կը տանի ներքե, իսկ էստեղ կը պատահենք մերոնց—Սմբատի կամ Օրբելեանի զօրքին: Եւ հէնց որ բերդի գլխաւոր պատը կընկնի, մենք էլ նշրանց հետ միասին ներս կը թափուենք:

Էրեկլէ. Դեռ արեւը չծագած, նա ինձ հետ կը լինի, իմ գրկում: Հայր, ես կը խելագարուեմ: Քիչ է մնում, երջանկութիւնից սիրտս տրաքի: Միայն ասա ինձ. Թագաւորը... Թագաւորը կարո՞ղ է՝ ում հետ էլ ուզենայ՝ պսակուել:

Անանիա. (Միծաղելով) Է՛հ, արքայորդի, ափսոս, որ դու էլ էն Էրեկլէն չես: Ախար պսակուելու մասին միտք անելու ժամանակ է հիմա: Համբերիր, մի լոյսը բացուի: Բայց, էհ, արիւնդ է Էդպէս: Ողորմածհոգի հայրդ էլ... Է՛հ, ինչ ասեմ: Բայց տեղը որ եկաւ, նա մինչեւ վերջին շունչը կուռեց ու մեռաւ,

քաջ գինուորի պէս: Համա ինչ թագցնեմ—թագուհին քեզ համար մի հարսնացու է պատրաստել, մի հարսնացու, որ նմանը չես ճարի:

Էրեկլէ. Ո՞վ է:

Անանիա. Գայեանէն, Օթար-բէկի աղջիկը: Հ'ը, հնց է: Էսօր դեռ մեր ու ուրիշի պրիւնով կը հարբենք, յետոյ էլ, Աստուծով, թագաւորի հարսանիքին գինով կը հարբենք: Միթէ մեզ էդ ողորմութեան չպիտի արժանացնես: Միթէ էսքան տանջուելուց յետոյ, չպիտի մի ազատ շունչ քաշենք: Ձէ, չեմ մեռնի, մինչև որ հարսանիքիդ մեր կրակոտ պարը չպարեմ:

Էրեկլէ. (Սաստիկ զարմացած) Ասում ես... Գայեանէն: Օթար-բէկի աղջիկը:

Անանիա. (Խտուկեամբ) Կը ներես, արքայորդի, հիմա էդ բաների մասին խօսելու ժամանակը չէ: Ես կ'երթամ, չորս կողմն աչքի կ'անցկացնեմ. ո՞վ է իմանում, լաստի ճամբին կարգ է ետ մնացած մարդ լինել: Դու ինձ էտեղ սպասիր ու չորս կողմը մտիկ արա, աչքից բան չփախցնես: Հէնց որ կամաց շուտցիս ձէնը լսես, իջի՛ր դէպի գետը: Էդ նշան կը լինի, որ ժամանակ է և ճամբէն էլ ազատ է: (Գաղտազողի եւ անլսելի քայլերով հեռանում է դէպի ձախ):

VII

Էրեկլէ. (Կանգնած է ծառի ստուերում, գինետան մօտ եւ շշմջում է) Ո՞չ, այդ չի՛ լինի... Օթար-բէկի աղջիկը. Գայեանէն... Դաթօն ասում էր...

Ռուքայա. (Կամացուի) Էրեկլէ:

Էրեկլէ. (Ցնցուելով) Այո ի՞նչ է:

Ռուքայա. Էրեկլէ, ես եմ, Ռուքայան եմ:

Էրեկլէ. (Ուրախութեան խուլ ձիւ արձակելով, մի քանի ոտիւնով նետում է դէպի գինետան աւերակները, զրկում է նրան, նայում է երեսին եւ առանց ծայր հանիլու, կտրուած հասկի նման, անզգայ ընկնում է նրա ոտքերի մօտ):

Ռուքայա. Ուշքի եկ, սթափուի՛ր, Էրեկլէ: Ե՛ս եմ, Ռուքայան եմ: (Համբուրում է նրան: Նա ցնցւում է եւ արքեր բացում):

Էրեկլէ. Ո՞չ, սա գառանցանք չէ... սա երագ չէ... Դու ես. դու—այստեղ, ինձ հետ: Օ՛, եթէ իմանայիր, թէ ի՞նչ քաշեցի ես այս հինգ օրը: Իսկ այժմ... այս դու ես... Այս քո ձեռքերն են... քո երեսն է... Զգում եմ քո շունչը, քո բուրմուռները... Դու ես... դու ես... (Համբուրում է նրա երեսը, ձեռքերը, ծնկները):

Ռուբայա. (Յանկարծ ուժգին թափով ազատուամ է նրա գրկից՝ եւ ձեռքն իշխանաբար դնում է նրա զլխին) Սպասիր, Այժմ ամեն մի բողոքն թանկ է։ Առ այժմ ստացիր վերջին համբույրս։ (Սիրաբորբոք եւ երկար համբուրում է նրան։ Յետոյ յանկարծ ընդհատում է համբուրելը եւ նայում է նրա աչքերին)։ Այժմ արդէն դու իմն ես։ Ես ներս ծծեցի քո հոգին։

Էրեկլէ. (Երջանկութիւնից, ասես խելքը կորցրած՝ նայում է նրա աչքերի մէջ) Այո՛, այս դու ես... դու։

Ռուբայա. Ես ուզում եմ, որ դու իմը լինես յաւիտեան, և այդպէս էլ կը լինի։ Սիւլէյման թագաւորին դաւաճանութիւն է սպառնում։ Այս քանի օրերս ինձ պահում էին գերդուհու նըման։ Ես չէի կարող մարդ ուղարկել նրա մօտ։ Եթէ Ալ-Ռազաքին սպանելու պէտք չլինէր, ես նրա միջոցով ամեն բան իմաց կը տայի։ Բայց նրան պէտք էր սպանել, ապա թէ ոչ՝ ինձ կը սպանէին։

Էրեկլէ. Օ՛, այժմ էլ ոչ մի բանից մի վախենար։ Դո՛ւ չգիտես, ո՞վ է քեզ սիրողը։ Ես քո Սիւլէյմանին ոտքիս տակ կը տամ ու կը տրորեմ, այս կոշտացած կաւի պէս։ (Կխօծում է կաւի քոռոճը)։

Ռուբայա. Դէ՛ս։ (Մեղմ ու զրգռիչ ծիծաղով)։ Դու լաւ համբուրել գիտես, աւելի լաւ, քան թէ նա։ Իսկ մարդիկ ոտքի տակ տալ՝ նա աւելի լաւ գիտէ, քան թէ դու։ Ո՛չ, նրան ոչ թէ պիտի ոտքի տակ տալ, այլ ինձ հետ միասին պիտի փախչել, գնալ նրա մօտ և հէնց իսկոյն։ Ես ամեն բան իմացել եմ։ Նրանք ուզում են մտնել քաղաքը ու ապստամբների առաջ դարպասները բանալ։ Ո՛չ, ես նրանցից առաջ կը հասնեմ այնտեղ։ Ես եղջերուի նման արագ եմ վազում, իսկ նրանց կարաւանը դանդաղ է ընթանում... Նրանք ճանապարհից ծռուել չեն կարող, իսկ ես միայն այս սարը պիտի կտրեմ։

Էրեկլէ. Ռուբայա, սպասիր, դու չգիտես... Քեզ չեն թողնիլ ներս մտնես։ Այնտեղ մերոնք բռնել են բոլոր անցքերը։

Ռուբայա. Ճշմարիտ։ Նոյն իսկ եթէ ասեմ. «Թափառական Սաբա»։ (Ծիծաղում է)։ Օ՛, Զէյնաբ թագուհի, դու խորամանկ ես, բայց ես աւելի խորամանկն եմ։ Ես քեզ խաբեցի։ Ես ամեն բան իմացայ։ Ես դադուակ ականջ էի դնում, երբ դու երկար—բարակ խօսում, դաւադրութեան ծրագրներ էի կազմում քո անիծեալ պառաւի հետ։ Ես կոտորից լսում էի, ինչպէս դաւաճան Օթար-բէկը խորհրդակցում էր այն թափառական Սաբայի հետ... Նրանք իմ ձեռքումն են։ Նրանք ինձ բերին, հասցրին այստեղ, քաղաքին մօտ։ Որպէս զի գեղեցկութիւնս չփչանայ, չթառամի, նրանք ինձ սայլ նստեցրին,

մին—մինսկի, որ ոչ ոքի չկաշառեմ և շրջապատեցին ինձ պատուաւոր պահակախմբով: (Ծիծաղում է): Եւ ահա, տեսնում ես: Այս ետինընդիմ ու բաշըղը իմ ծպտաներից մէկինն է: Նրանք մէկ էլ բերդում կը տեսնեն ու կը ճանաչեն ինձ և այնտեղ էլ կը դիմաւորեմ ես նրանց: Նրանք ուզում են բերդը մտնել—և կը մտնեն: Եւ նրանց ամենքին, ամենքին էլ կտոր—կտոր կ'անեն այնտեղ: Իսկ թագուհուն, ճ, թագուհուն առանձին պատիւ է սպասում... Ես ոտքի տակ կը տամ նրա հպարտ աչքերը: Եւ նա ոտքիս տակ շնչաւաւ կը լինի: Ի՞նչ պատահեց քեզ:

Էրեկլէ. (Մեծիւ պէս զուճառուած, ապուշ աչքերով նայում է նրան): Ո՛չ, Ռուքայա, դու չգիտես...

Ռուքայա. Ի՞նչ չգիտեմ: Ես մի բան միայն գիտեմ, որ տեսել եմ քեզ և դու ազատ ես: Ես կարող էի ուղղակի փախչել, բայց քեզ էի որոնում... հասկանում ես: Ես քեզ այնտեղ էլ կ'ազատէի, բայց հիմա լաւ է... Ես ջերմ փափագում էի տեսնել քեզ... Իսկ հիմա... Մենք երկուսս կը գնանք թագաւորի մօտ: Ես կասեմ, որ դու ինձ օգնեցիր փախչելու, որ քեզ դաւաճանները կալանաւորեցին, որովհետեւ հաւատարիմ մնացիր թագաւորին, և դու գործով կ'ապացուցանես նրան քո հաւատարմութիւնը: Նա կը պարգեւատրէ քեզ, և ես թագուհի դառնալով կը սիրեմ ու փառք ու պատուի կը հասցնեմ քեզ: Փախչէ՛ք: Նրանք դեռ ճանապարհի կէտը չանցած՝ մենք արդէն այնտեղ կը լինենք: Այժմ իսկ ժամանակն է: (Վազելով բարձրանում է զինետան աւերակների պատի վրայ եւ դիտում է հեռուն): Զօրքը ցած է իջնում... հրէ՛ն, նա գալարւում, պտոյտներ է անում սե ու երկար բծի նման: Օ՛, ես կատուի պէս սրատես եմ. ես լսում եմ նոյն իսկ խոտի աճելը: (Ծիծաղում է իր սովորական ծիծաղով): Գնացէ՛ք, գնացէ՛ք... Ես կը դիմաւորեմ ձեզ... (Ուժգին թափով ընկնում է էրեկլէի վրով): Օ՛, բնչպէս երջանիկ կը լինենք մենք: Ահա քեզ էլի՛ զրաւական: (Համբուրում է նրան եւ քրքշում): Նրանք տանում են Ռուքայային: Հա, հա, հա: Հիւանդ Ռուքային... հա, հա, հա: Պահակներով շրջապատած... Երևի, դարպասների մօտ թագուհին կը բարձրացնէ սայլի ծածկոցը և կ'ասէ. (ծաղրով ձեւացնում է թագուհուն) հիմա քեզ լաւ ես զգում, զեղեցիկուհի: Օ՛, մի տեսնէի նրա երեսն այն բոլակին, երբ նրա աչքը կ'ընկնէր դափարի վանդակին: Ուշ է: Դէ, թոչենք՝ թե առած: Ինձ ծանօթ է այնտեղի ամեն մի շաւիղը... Թրոչէ՛ք, սլանանք երջանկութեան ետեից... Զմոռահա՛ս՝ թափառական Սաբա՛: Հա, հա, հա: (Քաշում է նրան իր ետեից): Ի՞նչ է, վախենում ես հետեւել ինձ:

Զրնկէ. Սպասիր, Ռուքայա... Անկարելի է, անկարելի է...
Ռուքայա. (Ապաշ) Ինչն է անկարելի...

Զրնկէ. Դու չգիտես—սիւ եմ ես և ինչ պիտի անեմ...
Դու չգիտես—սիւ ես ուզում կորստի մատնել... Նա իմ մայրն է, Ռուքայա:

Ռուքայա. Ինչ... դու զառանցում ես:

Զրնկէ. (Ուժգին եւ բռն) Ո՛հ, Ռուքայա: Այդ Սիւլէյման Թազաւորը սպանել է իմ հօրը... Նա ուղեցել է ինձ էլ սպանել... Ինձ փրկել է ծերունի Գլախան... Իմ հայրը Թազաւոր է եղել... Ինքը Թագունին, Օթար-բէկը և ծերունին... այս բոլոր պէիս ծունկ էին չոքել իմ առաջ... Ամեն ինչ պատրաստ է... Ռուքայա, ամեն ինչ: Ես այսօր օդ պիտի թոցնեմ Մետեխի պահեստները... Իմ մարդիկը ներս կը խուժեն խորտակուած ամբողջ և քո տէր-իշխան Սիւլէյմանը կը ջնջուէ իր ամբողջ զօրքով: Ես կը բարձրանամ հայրենի գահը և դու կը բազմես իմ կողքին...

Ռուքայա. (Աչքերը չռած նայում է նրան) Դու ցնորոհել ես:
Զրնկէ. հի, իմ հոգիւ հատոր, հի, իմ պայծառ արեւ:
Դու էիր իմ առաջին մտածմունքը, երբ իմացայ, թէ սիւ եմ ես: Նրանք ուզում են Օթար-բէկի աղջիկը տալ ինձ կնութեան...

Ռուքայա. (Չար յոյզի եւ խանդոտութեան ակամայ ճշով) Ա՛հ:
Զրնկէ. Բայց սիւ կը համարձակուի հրամաններ տալ Թագաւորին: Քեզ համար կը շողշողայ իմ գլխի Թագը: Քո ոտքերի առաջ կը խոնարհուի իմ ամբողջ Թագաւորութիւնն՝ ինձ հետ միասին:

Ռուքայա. Սպասիր... սպասիր... (Յոնքերը կիտած՝ սաստիկ մտածում է): Դու՛ այդ երեխայ տեղովդ... Թագաւոր: Դու—Թագաւոր: Եւ Զէյնաբ Թագունին քո գլխին խնամակալ... Հապա ես... (Քանդ-քան ծիծաղում է):

Զրնկէ. Մի ծիծաղիլ, Ռուքայա: Ես երեխայ չեմ. դու չգիտես իմ ոյժը:

Ռուքայա. (Արագ) Քեզ խաբել են: Քեզ խելքից հանել են, այ երեխայ: Դու ի՞նչ Թագաւոր ես: Միթէ՛ Թագաւորներին կալանաւորում ու սպանուելու են ուղարկում: Դու նրա որդի՛ն ես: Միթէ՛ մօր սիրտը կը տայ, որ մի ամբողջ շաբաթ իր որդին շղթայակապ պահուի: Միթէ՛ մայրը կը թողնէ, որ որդին ժայռերի փլուածքներում գտնէ իր գերեզմանը:

Զրնկէ. (Վարանման մեջ, չիմանալով որին հաւատալ) Ո՛հ... հի... Անանխան հետս է լինելու... Նա ինձ սիրում է...

Ռուքայա. Ինքը ասացիր, թէ՛ դու նրա որդին չես: Եւ ի՞նչի նա պիտի մեղքանայ քեզ: Նրա հարազատ որդին փա-

խաւ, իսկ քեզ բռնեցին...

Էրեկլէ. Բայց չէ՞ որ նա իր վրայ առաւ իմ գործած ոճիրը:
Ռուքայա. Եւ փախաւ, իսկ քեզ բռնեցին: Հիմա էլ քո
հոգեհայրը քեզ ամբողջ պայթեցնել կը տայ և ինքը կը փախ-
չէ. իսկ դու կտոր-կտոր եղած՝ օդ կը թռչես: Հէնց այդ բանի
համար էլ քեզ պատրաստել են... Ո՞րտե՞ս ես պէտք դու: Ո՞վ է
սիրում քեզ: Միայն ես (Համբուրում է նրան: Յանկարծ): Սպասիր.
ուրեմն դու ես նա... Գո մասին էին խօսում Օթար-բէկն ու
Թագուհին...

Էրեկլէ. (Մոլորում) Ի՞նչ էին ասում:

Ռուքայա. Այն, ինչ որ ես միայն հիմա եմ հասկանում:
Համբերիր. թող միտս բերեմ (Որպէս Թէ մտաբերելով): «Այն ըն-
կեցիկը կը պայթեցնէ Մետեխը»...

Էրեկլէ. (Ցնցուկով) Ընկեցիկ:

Ռուքայա. Այո, այո... Իսկ ինձ համար այդ ընկեցիկը
բոլոր Թագաւորներէն աւելի է սիրելի: Ես չեմ թողնիլ,
որ քեզ կորուստի մատնեն: Ե՛ս նրանց կը կորցնեմ: Ես վրէժ-
խընդիր կը լինեմ... քո փոխարէն: Օ՛, սիրելիս, հոգիս կեան-
քըս (Համբուրում է նրան: Սովորական ծիծաղով): Բայց եթէ դու իս-
կապէս էլ որ Թագաւոր լինէիր... միթէ Զէյնաբ Թագուհին
ինձ... ողջ-ողջ կը տար քեզ, ինձ՝ ստրկուհու: Նա ինձ կը
թոնաւորէ: Բայց չէ՞ որ այդ բոլորը սուտ է... Նա վաղուց է
սիրում Օթար-բէկին: Նրան է ուզում Թագաւոր դարձնել:
Օ՛, ես այդ բոլորը գիտեմ, այդ բոլորը հասկանում եմ... Ես
լսել եմ նրանց խօսակցութիւնը... Բայց քեզ չեն խլիլ ինձա-
նից: Քեզ չեն կորցնիլ, քանի ես կենդանի եմ... Ես կ'ազատեմ
քեզ... Դու ես իմ աշխարհը, իմ Թագաւորութիւնը...

Էրեկլէ. (Նայելով նրա աչքերի մէջ) Նրանք ինձ խաբել են:
Այո... Օ՛, անիծուածներ: (Հեռուից լսում է թնժել սուլոց):

Ռուքայա. Այս ինչ է:

Էրեկլէ. Գլխիս կանչում է ինձ...

Ռուքայա. Ո՛ր:

Էրեկլէ. Լաստ նստելու:

Ռուքայա. (Փաթաթուկով նրան) Թող կանչի: Դու ինձ հետ
կ'երթաս, չէ՞:

Էրեկլէ. Վերջին անգամ, Ռուքայա: Ներքեմ ես, որ սի-
րում ես ինձ:

Ռուքայա. Եթէ չսիրէի, չէի ազատիլ քեզ: (Համբուրում է
նրան: Նրկորդ: Կուլոց): Սուլբի: Մենք առանց քեզ էլ ճանապար-
հը կը գտնենք: (Նրկուք: միասին վազում են կիթի խորքը):

ՎԱՐԱԳՈՅԻ

ԱՐԱՐՈՒԱԾ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Հանգստի սենեակ Սիւլէյմանի ապարանքում։ Խորքում՝ պատուհանի լայն խողոջ (амбразура), որի գունաւոր ապակիներով պատը նայում է դէպի մաւրիտանական սիւներով զարդարուած բաց պատշգամբը (терраса)։ Գետի միւս կողմում երևում են Մետեխի ժայռերը՝ ամրոցի ամբարտաւաններով և տաճարով, ինչպէս առաջին արարուածում։ Սենեակի պատերը ծածկուած են զորգերով, առաստաղը նախշած ու կամարաւոր։ Գատերի մէջ խորունկ խորշեր, ուր շարուած են ամաններ։ Առաստաղի զանազան մասերից շղթաներով կախուած են կանթեղանման լապտերներ։ Գատերի տակ՝ զորգերով ու բարձերով ծածկուած լայն թախտեր, որոնց վրայ փռուած են ոսկեկար ու մետաքսանկար նուրբ գործուածքներ։ Ջախ-կողմը, պատի մօտ, դրած է դահաթախտ, որի վերեւը, պատից կախուած են զէնքեր՝ ասորճանակներ, թրեր, տապարաձև տէգեր և նիզակներ։ Այլ ու ձախ կողմի դռները, բացի միջին դռնից, մօտ են նախաբեմին։ Սենեակի մէջտեղում՝ աւազան՝ գուշաւոր մարմարից։ Գիշեր է։ Երկինքն յաճախակի լուսաւորում է կայծակի փայլատակումներից։ Մերթ ընդ մերթ լսելի են որոտմունքի խուլ, ուժգին հարուածներ։

I

Սիւլէյման-խանը կիսաքնի բազմած է ծախտին։ Ղարա-Խուսուֆը կանգնած է նրա առաջ ստրկական դիրքով։ Խորրում, պատշգամբի վրայ, երևում է Խասխարի կերպարանքը

Սիւլէյման-խան. Գիշերապահ ձիաւորները շնոր մարդ են բռնել այսօր քաղաքի շրջականներում։

Ղարա-Խուսուֆ. Ինչուո՞ւն հոգի, ո՞վ աշխարհի զարդ։ Այս րոպէին Օթար-բէկի սուրհանդակը լուր բերեց վերջին դադարի տեղից, որ Էրիսթաւն իր հետ դարձեալ յիսուն մարդ է բերում։

Սիւլէյման-խան. Բռնուածներն ի՞նչով են ղինուած։

Ղարա-Խուսուֆ. Ամենից շատ—հովուական երկաթապատ մահակներով, մուրճերով ու մանգաղներով։ Քիչերն ունեն թուր ու դաշոյն և միայն չորս հոգի՝ հրացաններ։

Սիւլէյման-խան. Եւ այդ զէնքով նրանք զալիւ են... իմ դէմ կոտուելու։ Ի՞նչ են ասում հարց ու փորձի ժամանակ։ Ի՞նչի են հաւաքուում։

Հարա-իւտուֆ. Ոմանք ընտանեկան, ոմանք էլ առևտրական գործերն են պատճառ բերում, հմ յաղթողների յաղթող։ Մէկը միայն չգիմացաւ տանջանքներին, սկսեց բղաւել ու ըստ պառնալիքներ կարդալ... (Ծիծաղում է)։

Սիւլէյման-խան. Ի՞նչ սպառնալիքներ։

Հարա-իւտուֆ. Յիմար բաներ, հմ ամենազօր։ Բարբառն-ջում էր, թէ խաչի դէմ գնացողին՝ խաչը կը կործանէ, թէ մօտ է Աստուածային ցածումը, թէ... լցուել է համբերութեան բաժակը... Նրանք մահից առաջ յաճախ են այդպէս բղաւում ու տակից-գլխից դուրս տալիս։ (Որոտմունք)։

Սիւլէյման-խան. Թագուհին այսօր հաղորդում է, որ Օրբելեանն ու Մմբատը, փախել, գնացել են Մոսկովի Թագաւորի մօտ՝ նրանից օգնութիւն խնդրելու։

Հարա-իւտուֆ. Հեռու է Մոսկովի Թագաւորը, ամենայնալ յաղթ տէր։

Սիւլէյման-խան. Կովկասի այն կողմը, ցուրտ ու մութ երկրներում, ապրում են Գոգն ու Մագօզը, ասում է ղուրանը։ Բայց դեռ շուտ չի լսուիլ Իսլամի վախճանական ժամը։

Իսախար. (Պատշգամբից) Արդէն լսում է... հեռուից։

Սիւլէյման-խան. Ի՞նչ ասացիր, Իսախար։

Իսախար. Ես լսում եմ ձերի հեռաւոր տրոփիւնը։ Թագուհին մօտենում է։

Սիւլէյման-խան. Հարա-իւտուֆ, Թագուհին տեղեկացնում է, որ հարկահանների վրայ յարձակումն են գործել, որ Ալ-Ռազաքին սպանողները հարց ու փորձի ժամանակ յանդգնում են անպատիւ խօսքեր ասել Թագուհու երեսին։

Հարա-իւտուֆ. Թագուհին է տեղեկացնում։ Թող նա իմ ձեռքը տայ նրանց, տէր։ (Աչքերը ծռիլով)։ Բայց թոյլ տուր իմանալ—Ռուքայայից լուր կայ։

Սիւլէյման-խան. Նա տեղեկացնում է, որ Թագուհին վախենում է Օթար-բէկի աղջկայ գեղեցկութիւնից։ Էրիսթան աշակերտելիս է եղել Թագուհուն՝ յայտնելու ինձ, որ նրա աղջկին արժանի չէ փաղիշահի հայեացքին։ Ռուքայան վերջին սուրհանդակի բերանով հաղորդում է, թէ Թագուհին կը փչացնէ այդ աղջկան։ (Հիգնանքով)։ Կին-արարածը կարծում է, թէ աշխարհիս երեսին էլ ուրիշ ոչինչ չկայ, բացի իր գեղեցկութիւնից։

Հարա-իւտուֆ. Փնոք քո իմաստութեան, հմ ամենազէտ։ Իսախար. Փնոք քո իմաստութեան։

Սիւլէյման-խան. Օրբելեանի խմբերի դէմ ուղարկուած զօրաբաժինը վերադարձել է։

Հարա-իւտուֆ. Դեռ ոչ, հմ հուր ու շանթ անհաւատների։

Սիւլէյման-խան. Ես հրամայել էի երրորդ օրը վերադառնալ: Այսօր հինգերորդ օրն է:

Ղարա-Խանուֆ. Հինգերորդն է, արդարութեան օթեան: Փոթորիկն ու հեղեղները փչացրել են ճանապարհները, գետերը վարարել են...

Սիւլէյման-խան. Այդպիսի փոթորիկներին, վախկոտ շահն, ես հազար բեդուկնի հետ Խնդոսն եմ անցել ու հազար փիղ առջև ձգած՝ դէս ու դէն փախցրել: (Մտախոհ): Ճշմարիտ է, այն ժամանակ արեգակն այնպէս սև չէր երևում աչքիս, երբ ես նայում էի նրան:

Դսախար. Նա շուտով էլի կը փայլի:

Սիւլէյման-խան. Ի՞նչ ես ասում, Դսախար:

Դսախար. Ասում եմ, արևը շուտով կը փայլի... այս գիշերուայ փոթորկից յետոյ:

Սիւլէյման-խան. Ամպը չէ, որ սքողում է նրան, այլ դաւաճանութիւնը: (Հանգիստ): Ղարա-Խանուֆ, ի՞նչ է գրում Սարդարը Երևանից:

Ղարա-Խանուֆ. Ասող... (Երկիւղից մեռելի գոյն ստացած՝ չի կարողանում ոչ մի խօսք ասել: Ծնկները դողողալով՝ իրար են խփում): Սիւլէյման-խան. (Սարսուռ բերող եղանակով, առանց նայելու նրա վրայ) Ի՞նչ է գրում քեզ սարդարը Երևանից:

Ղարա-Խանուֆ. Ասող... ասողերի ախոյեանն, ես նամակ չեմ ասացել...

Սիւլէյման-խան. Ստացիր ուրեմն... Դա վաղուց է սպասում ես այս պատասխանին: (Տալիս է նամակը: Ղարա-Խանուֆը ոտքերն հագիւ շարժելով՝ մօտենում է, վերցնում է նամակը եւ փուռում Սիւլէյմանի ոտքերի առաջ):

Դսախար. (Ննքն իրան) Հրդեհից առաջ մկները դէսուդէն են փախչում: (Բարձրաձայն): Տէր իմ, դահճին կանչեմ:

Ղարա-Խանուֆ. (Երթունքներն հագիւ շարժելով) Տիեզերքի... զանգ... լոյսի... ես չեմ դաւաճանել... ես ուզում էի նրանց դիտաւորութիւններն իմանալ... Խղճա...

Սիւլէյման-խան. Ի՞նչի համար: (Որոտքի հարուած):

Ղարա-Խանուֆ. (Փոքր ուտելով նրա ոտքերի առաջ) Ես ծառայել եմ քեզ... Խղճա...

Սիւլէյման-խան. Հարցնում եմ—ի՞նչի համար: Ասա, հեր է քո իմաստութիւնը, Ղարա-Խանուֆ, իմ խելօք վեզիր,—այնտեղ, ինչտեղ քո հաւատարմութիւնն է:

Դսախար. Դահիճներին կանչեմ, տէր իմ:

Սիւլէյման-խան. (Մտախոհ եւ մռայլ) Արժէ, որ մարդ կեանք քի համար աղէքսէ: Ամեն բան կանցնի: Չկայ ժամանակ, կայ

միայն յաւիտեանականութիւնս։ Ա՛յն, ինչ որ կար երէկ, չկայ այլևս։ Ա՛յն ինչ որ լինելու է էգուց, չի՛ լինիլ երկու օրէց յետոյ... Ձկնայ ալկա ան, ինչ որ ասացի քեզ, երբ սկսեցի իմ խօսքը։ Ի՞նչիդ է պէտք ներուսնս։ Ամեն բան կանցնի։

Ղարա-Խւտուֆ. Ես քո առաջ կը բանամ թշնամիներիդ բոլոր մեքենայութիւնները։ (Համբուրում է նրա ոտքերը)։

Սիւլէյման-խան. (արհամարանքով) Ասա։

Ղարա-Խւտուֆ. (Բռն ուրախութիւնից խնկորոյս ձգալով) Տիեզերքի տէր ու թագաւոր, ես ամենքին կը մատնեմ, ամեն բան կ'ասեմ։ Այս օրերս այստեղ է գալու փաղիշահի դեսպանը։ Հաս սովորութեան, դու պէտք է դիմաւորես նրան ամրոցից դուրս, դարպասների առաջ։ Քեզ ուզում են կտոր-կտոր անել, տէր իմ։

Սիւլէյման-խան. Դու շուտ ասացիր, Ղարա-Խւտուֆ։ (Վեր կենալով, անվրդով)։ Արի՛ իմ ետեից։ (Մտնելով է պատշգամբի դռանը եւ բացում է)։ Դու ինձ այլևս պէտք չես։ Դու հոջն ասացիր։ Թող կատարուի արդարադատութիւնը։ Դու արժանի ես մահուան պատժի, քանի որ դաւաճանեցիր ինձ, և—ներման, քանի որ նրանց ես դաւաճանում։ Այլահը ցոյց կը տայ, թէ՛ հիւ պիտի մեղանից յաղթողը լինի. եթէ կորար—կը յաղթեմ ես, իսկ եթէ ազատուեցար—կը յաղթեն նրանք։ Ահա քո ճանապարհը։ (Ցոյց է տալիս ցածում հոսող գետը)։

Ղարա-Խւտուֆ. Տէր իմ, այնտեղ գետի խոր ու արագ տեղն է։ Այնտեղ սուր-սուր քարեր կան... Դա մահուան պատիժ է, հիւ աշխարհի տէր-իշխան։

Սիւլէյման-խան. Եթէ քեզ վիճակուած է ազատուել, կ'ազատուես... (Խտուֆն ընկնում է նրա ոտքի)։ Խօսքս—խօսք է և կտրուկ, սրիս պէս։ (Ղարա-Խւտուֆը-նետում է գետը)։

Դսախար. Սա երկրորդն է։ Մէկ-մէկ ընկնում են թու-նաւոր տերկները։

II

Սիւլէյման-խան. (Հերքել նայելով) Կորաւ։ Այսպէս էլ իմ թշնամիները կը կորչեն։ (Ձեռքիւր սարգիլով դէպի Մետեխը)։ Թող փորձեն յաղթել ինձ, քանի Մետեխը կանգնած է Թիֆլիսի բարձունքներին։

Դսախար. Պահպանիր Մետեխը, տէր իմ։ Պահպանիր Մետեխը։

Սիւլէյման-խան. (Շուտ գալով՝ նայում է նրա աչքերի մէջ) Ի՞նչ ասացիր։

Դսախար. Ասում եմ, Մետեխը պահպանիր: Այնտեղ է քո ամբողջ գործը: Այնտեղ են քո բոլոր պահեստները: Մետեխը պահպանիր: Դու ասում ես, չկայ ժամանակ, կայ յաւիտեանականութիւն: Իսկ առ այժմ—Մետեխը պահպանիր:

Սիւլէյման-խան. (Յանկարծ բռնելով նրա ձեռքը) Ասա, պառնա: Ի՞նչ գիտես:

Դսախար. (Խուլ մայնով ծիծաղում է) Տէր իմ, վաղուց է իմ ոսկորները գերեզմանի կարօտ են քաշում, և իմ մարմինը տանջանքներից չի վախենում: Ի՞նչ ունեմ ես այս երկրի վրայ ափսոսալու: Վաղուց է ես մի չոր-գլուխ եմ, մեն-մենանկ, գերեզմանի քարի պէս: Ի՞նչ կարող ես անել, որից ես սարսափեմ:

Սիւլէյման-խան. (Աւելի սեղմելով նրա ձեռքը) Ի՞նչ գիտես, ասա:

Դսախար. Անյաղթ Սիւլէյման, դու յաղթել ես աշխարհի կէսը, բայց ինձ յաղթել չես կարող: Ի՞նչպէս պիտի յաղթես ոչնչութիւնը: Ես—ոչինչ եմ:

Սիւլէյման-խան. (Ձեռքը բաց թողնելով) Ոչինչ:

Դսախար. Ոչնչութիւն դարձիր դու էլ ինձ նման, և էլ չես վախենալ ոչ մահից ու տանջանքներից, ոչ դաւաճանութիւնից ու փաղիշարից: Ես էլ վախենում էի, քանի պահելու ու պահպանելու բան ունէի: Որդիք ունէի—որդիներին համար էի վախենում, աղջկերք ունէի—աղջիկներին պատիւն էի պահպանում. տուն ունէի—տունս էի սիրում... Իմ որդին ձիու ոտի տակ սպանուեց:

Սիւլէյման-խան. Բո որդիս:

Դսախար. Այո... նա ահա այսչափ էր:

Սիւլէյման-խան. Ե՞րբ:

Դսախար. Շատ ժամանակ է: Աղջկերքս—խայտառակութեան են մատնուած: Տունս—քար ու քանդ է եղած: Եւ հիմա ամեն բան իմ աչքին թեթեացել է. էլ ոչինչ չունեմ—և ինքս էլ ոչինչ եմ: (Ծիծաղելով): Էլ ոչ դաւաճանելու, ոչ էլ կոռելու պէտք ունեմ... միայն պիտի սպասել:

Սիւլէյման-խան. Պառնա, թող այդ զառանցանքներդ: Ասա, ի՞նչ գիտես:

Դսախար. (Թեքուելով դէպի նս) Գնա Մետեխ: Այնտեղ վրտանգ չկայ: Այնտեղ են քո զինւորները: Այնտեղ է քո զէնք ու զրահը: Այնտեղ կենդանի մարդիկ քեզ ֆաաս չեն տալ: Իսկ մեռածները... (Յոյց տալով Մետեխի վրայ կիտուած ամպիրը): Նրանք այն ամպերի մէջ են: Նրանք սաւառնում են Մետեխի վրայ: Մէկ է, դու նրանց յաղթել չես կարող:

Սիւլէյման-խան. (Ակամայ ցնցուելով) Դու զառանցում ես:
Դասխար. Դու նրանց յաղթել չես կարող, խեղճ, ան-
յանդ Սիւլէյման: Իսկ մարդկանց աչքից—պահուի՛ր Մետեխում:
(Ներս են մտնում Զէյնաբն ու Յար-բէկը. Օթարի գլխին՝ չափայով պա-
տած սաղաւարտ):

III

Զէյնաբ. (Նետուելով Սիւլէյմանի ոտքերի առաջ) Վերջապէս,
արժանացայ քո ծունկերին փարելու, տէր իմ: Օ՛, անխժու՜ն
անջատման օրերը: Ո՛չ հեղեղ, ո՛չ փոթորիկ էի հարցնում. թե
առած՝ դէպի քեզ էի թռչում:

Օթար-բէկ. (Մուտքի մօտ ծունկ է չորհլ) Յաղթութիւնը քեզ
հովանաւոր, մեծագօր տէր:

Սիւլէյման-խան. (Հանգիստ եւ մոծապանծ) Վերադարձդ բա-
րե՛ք, Զէյնաբ: (Զէյնաբը ձեռքը համբուրելով՝ ոտքի է կանգնում): Ո՞վ էր
Ալ-Ռազաբին սպանողը:

Զէյնաբ. Ռուքայան, Նա փախաւ:

Սիւլէյման-խան. (Աչքը գցելով նրա վրայ) Ե՞րբ:

Զէյնաբ. Ես նրան տեսայ դեռ երկու ժամ առաջ, վերջին
դադարքի ժամանակ: Այն օձը երեք օր հիւանդ էր ձկանում:
Մթնանալու վրայ էր, երբ մենք տեղից շարժուցինք: Նա
շարունակ ջուր էր խնդրում և գէսուդէն էր ընկնում: Պա-
հակախումբ էր նրան շրջապատել—պատուաւոր պահակա-
խումբ: Ես չէի համարձակւում շղթայակապ բերել նրան
—դու նրան հակող էիր նշանակել իմ ամեն մի քայլիս: Կար-
ծում ես, ես այդ չհասկացայ:

Սիւլէյման-խան. Նա փախել է հազար հոգուց բաղկացած
զօրաբաժնից: Օթար-բէկ:

Օթար-բէկ. Ես ամեն կողմ սուրհանդակներ եմ ուղարկել:
Նրան կը գտնեն, տէր:

Զէյնաբ. Ես պիտի հետևէի համ աղջկանը, տէր իմ, համ
ոսկուն ու արծաթին, համ գերիներին, համ, վերջապէս, հէնց
սրան իրան: Ոյժերս սպառուել էին... Ինձ տանջեց ու յոգնե-
ցրեց մի կողմից՝ ճանապարհ դալը, միւս կողմից՝ քո կարօտը...
Անհամբեր սպասում էի մեր տեսութեանը... ժամանակ ունէի,
որ հսկեմ անարգ ստրկուհուն, ինձ լրտեսողին: Երդւում եմ,
Սիւլէյման, եթէ քո կամքն օրէնք չլինէր ինձ համար, անառակ
Ռուքայան այժմ շղթայակապ ընկած կը լինէր քո ոտքերի տակ:
Բայց և այնպէս՝ ամբողջ դարպասների առաջ ես կրկին անգամ
մօտեցայ, որ նրա սայլն աչքի անցնեմ: Սայլը դատարկ էր:

Պահակներից մէկը, համարեա մի երեխայ, առանց ետինջու և առանց բաշըղի էր. հրամայեցի, որ բռնեն նրան—և նրա աչքերից ու խօսքերից հասկացայ, որ քո սիրական հաւատարիմ Ռուքայան նրան խելքից հանել է:

Սիւլէյման-խան. Ռուքայան ի՞նքն է սպանել Ալ-Ռազաքին: Դու այդ աչքովդ տեսել ես:

Ջէյնար. Ո՛հ, տէր իմ: Մարդասպանը փախել է: Բըռնուած են նրա հայրը և... (նրա ծայնը դողում է) եղբայրը: (Արագ, աշխատելով խօսքերը վրայ տալ, որ Սիւլէյման ընդհատել չկարողանայ): Ես նրանց շղթայած բերել եմ հետս, և հրամայել եմ, որ մինչև առաւօտ նրանց Մետեխի բանտում պահեն: Կարելի է, ուզեմ ես հէնց հիմա հարցաքննել նրանց: Կը հրամայեմ, որ իսկոյն նրանց բերեն: (Ուզում է գնալ):

Սիւլէյման-խան. Ո՛հ, նրանց հարցաքննելու ժամանակ միշտ կը գտնուի:

Ջէյնար. Օ՛, եթէ տեսնէիր, թէ ի՞նչ օձի աչքեր էր շինել Ռուքայան, երբ մենք յանցաւորներին կալանաւորում էինք: Եթէ ականջ դնէիր նրա կախարդիչ ձայնի խարդախ ելէջներին... Կասկածն իսկոյն, փայլակի պէս, շողաց իմ գլխում... բայց ես նրա աչքերում կարդացի—ինքը թագաւորն է ինձ նշանակել, որ ես հսկեմ Ջէյնար թագուհին... (Դառն ծիծաղով): Կարծես Ջէյնար թագուհուն հաւատալ չէր կարելի: Կարծես քո հայեացքը, քո շունչը, քո արտեմանունքների ամեն մի շարժումը միշտ օրէնք չեն եղած խեղճ Ջէյնար թագուհու համար... Եւ ես չը համարձակուեցի ձեռք տալ քո անառակ Ռուքայային... Իսկ հիմա, տեսնում ես, թէ ում ես հաւատ ընծայել, որ հսկէ ինձ: Օ՛, ինչպիսի անարգանք: Եթէ դու նրան այդպէս հաւատում էիր, էլ թէ՛ սչու միայն նրան չյանձնեցիր:

Սիւլէյման-խան. Ընծաները պատրաստ են:

Օթար-բէկ. Պատրաստ են, տէր իմ: Ոսկի, արծաթ, ձիեր ու աղջիկներ... բոլորն էլ բերել, հասցրել եմ տասերորդ օրը:

Ջէյնար. Տէր իմ, բոլոր ընծաներն էլ արժանի են փառիշահի բարձր շեմին: Բայց աղջիկը—սրա աղջիկը: Օ՛, իմ թագաւոր, Իրանի իշխողը նրա մի հայեացքի համար Երևանի սարդարին շղթայած քո ոտքի տակ կը ձգէ... Մնացեալ պարգևները դու վաղն էլ կարող ես նայել, բայց աղջկանը նայիր հէնց իսկոյն: Կը հրամայեմ, բերեն նրան: (Սիւլէյմանը զլխով հաւանութեան նշան է տալիս): Օթար-բէկ, (նշանակալից) աղջկանդ բեր և ինքդ էլ պահնորդ կանգնիր... ձիերի ու բռնների մօտ:

Իսախանը, դու էլ գնահ հետը, որ աղջկանը բերես: (Օթար-բէկը եւ Իսախանը դուրս են գնում):

IV

Ջէյնար. (Արագ եւ ննարդային դրութեան մէջ) Օթար-բէկն հիմա մինչեւ գերեզման հաւատարիմ կը մնայ քեզ: Այդ աղջիկը նրա համար կեանքից էլ թանգ է: Իսկ մեզ այժմ հաւատարիմ մարդիկ են հարկաւոր: Վրաստանն յուզուած է:

Սիւլէյման-խան. Այ-Ռազաքը սպանուած է: Մարդասպանը բռնուած չէ: Ռուքայան փախել է: Վրաստանը յուզուած է: Ղարա-Իսուֆը մահուան պատիժ է ստացել:

Ջէյնար. Մահուան պատիժ: Ի՞նչի համար:

Սիւլէյման-խան. (Նայելով նրա աչքերի մէջ) Դաւաճանութեան համար: Ջէյնար թագուհի, Ջէյնար թագուհի:

Ջէյնար. (Վիշտ ու ցաւ ցոյց տալով, գրկում է նրա ծննդը) Ի՞նչ է: Ի՞նչ ես հրամայում, աչքիս լոյս: Ի՞նչի ես այդպիսի մեղքնոյ հայեացքով նայում ինձ: Վախեցած քո շուրջ տիրած դաւաճանութիւնից, դու այլեւ չես հաւատում քո ստրկուհուն... Այո, ստրկուհուն, ստրկուհուն, իր ամբողջ կեանքը քեզ նուիրած ստրկուհուն: Բայց ես ստրկուհի եմ, որին դու կոռով ես ձեռք բերել, և ոչ ոսկով գնել կամ պարգև ստացել... Ես ստրկուհի եմ քո շանթաւից աչքերի, քո առիւծային սրտի, քո երկաթի բազկի... (Ձայնն ակամայից ատելութեան եւ չարութեան եղանակ է ստանում): Ի՞նչ թողիր դու ինձ համար, բացի միայն քեզանից: Դու զրկեցիր ինձ իմ որդուց, իմ թագաւորութիւնից, իմ հաւատից... (Փոխում է եղանակը): Դու նուաճեցիր ու բնաջինջ արել ամեն բան—և ես, աղանիկի պէս, կուշ եմ գալիս արծուի թևերի տակ... Ո՛ւր կարող եմ թռչել քո ձեռքից: Ամեն ինչ քո զօրեղ մագիլներումն են... և յոշոտիւր, պատահապատահ արա ամենքին, բայց ոչ ինձ... (Գարձեալ վարդապետի իրան զսպել): Յոշոտիւր, քանի դեռ քո մագիլները... (Որոտ ու կայծակի ուժովն հարուած): Ա՛...:

Սիւլէյման-խան. Ի՞նչ պատահեց քեզ:

Ջէյնար. (Ինքն իրան տիրապետելով) Վախեցայ: Սիրտս մաշուել է տանջուելուց, քո հոգսը քաշելուց... և ես վախեցայ... Մի նայիր այդպէս:

Սիւլէյման-խան. Ես կեղծիք եմ զգում քո ձայնի մէջ...

Ջէյնար. (Ձայրոյթով) Դէ, սպանիւր ինձ... և կը հանգըստանաս: Նա կեղծիք է զգում իմ ձայնի մէջ, Իսկ անառակ Ռուքայայի ձայնի մէջ դու ճշմարտութիւն էիր զգում: Իսկ շո-

դոքորթ, կաշառուած Ղարա- Իւուֆի ձայնը քեզ ճշմարտութիւն էր ներշնչում: Սիւլէյման, ես չեմ դաւաճանողը, բո լսողութիւնն է քեզ դաւաճանում: Գո աչքերն են քեզ խարում: Աստղերն ես դու սեացած տեսնում, թէ այս ամպերն են քո աչքին գիշերը լուսաւորում: Սպանիր ինձ, սպանիր: Ես ուրախութեամբ կը մեռնեմ, միայն թէ դու հանգիստ գտնես: Կամ հաւատն ինձ, կամ սպանիր:

Սիւլէյման-խան. (Մեղմացած բայց մոայլ) Մինչև այժմ մահըն ընթանում էր ինձ հետ միասին, իմ առաջից. նա երբէք չէր վստահանում շուռ գալ, նայել աչքիս մէջ: Այժմ նա իր երեսն է դարձրել դէպի ինձ... նա թիկունքով է կանգնել դէպի իմ թշնամիները—և նրա ճակատից, որպէս Ղաֆ-Դադի սառցապատ խորքերից, ինձ վրայ սարսուռ է փչում: (Զէյնաբը նայում է նրան անպէս, ինչպէս մահը կը նայէր): Ես անցել եմ կեանքիս ուղին: Ահեղ էր այդ ուղին, որպէս Իսլամը, և փառքի փայլն էր նրան լուսաւորում: Բայց մարգարէն ասել է—հւմ գարշապարները ծածկուած են յանուն Ալլահի մղած կռիւների փողով, նա վերջին դատաստանի օրը հեռու կը մնայ գեհենից, աւելի հեռու, քան այն տարածութիւնը, որ ամենաարագավազ ձին կարող է անցնել հազար օրուայ մէջ: (Ներս է մտնում Օթար-բէկը, նրա հետ Իսախարը եւ Գայեան: Նա երեսի քողն իջեցրած. երեւում են միայն աչքերը):

V

Զէյնաբ. (Արագ մօտենալով նրան) Թող այդ ծանր մտքերն, ով իմ տէր: Մի տես, ինչ գեղեցկութիւն է: (Գայեանէի երեսից յետ է գցում քողը եւ մօտեցնում է նրան Սիւլէյմանին: Գայեանէն զունատ է. դէմքի արտայայտութիւնը խիստ եւ լուրջ: Զէյնաբն արագ աչքը գցում է Օթար-բէկին):

Օթար-բէկ. (Հազիւ լսելի) Մերոնք բռնել են դարպասները: Օրբելեանը ներսումն է:

Զէյնաբ. Մի այս աչքերին նայիր, տէր իմ... Այժմ չարութեան հուրն է նրանց բորբոքել... Նա վայրի ու երկչոտ է... Բայց երբ կիրբը նրանց լուսաւորէ... (Ականջ է դնում, խօսում է համարեա անգիտակցաբար) երբ փաղաքշահի ցօղը նրանց ծածկէ... հապա այս մազէրը... Այս կուսական իրման:

Սիւլէյման-խան. (Զմայլանքով) Փաղաքի գոհ կը մնայ:

Գայեանէ. (Սուր ձայնով) Ո՛չ:

Սիւլէյման-խան. (Ուշադրութիւն չդարձնելով) Զէյնաբ, սրան դու ինքդ կը տանես փաղաքահին:

Գայեանէ. Մեռած:

Սիւլէյման-խան. (Իսախարին) Իսախար, սրան տան:

Իրախար. (Ուզում է բռնել նրա ձեռքը) Գնանք, աղջիկս:
Դայեանէ. Ձեռքդ... Յոյց տհւր, Բնէ տեղ է իմ բանտը:
Իրախար. Յոյց կը տամ, գնանք: (Տանում է Գայեանէին):

. VI

Սիւլէյման-խան. Օթար-բէկ, ես գոհ եմ քո եռանդից:
Ինքը թաղուհին աղջկանդ կը տանէ Սպահան:

Օթար-բէկ. Մեծ է քո ողորմութիւնը, տէր իմ, և ես
փոխարէնը կը հատուցանեմ քեզ:

Սիւլէյման-խան. Վաղը դու պիտի ցիր ու ցան անես
Թիֆլիսի շուրջ կիտուած թշնամիներէ խմբերը: Գնա, Օթար-
բէկ: (Օթար-բէկը ղուկն է խոնարհում եւ զնում է աջ կողմը):

Ջէյնար. (Գայեանէին ճանապարհ դրած՝ վերադառնալով) Ինչ
սոսկալի փոթորիկ է: Տէր իմ, ես միանգամայն թուլացել եմ...
Ոյժերս ինձ դաւաճանում են: Օ՛, Ինչ ծանր յուզումներ ու մտա-
տանջութիւններ ասես չեմ քաշել ես այս քանի օրս: (Սիւլէյմանը
նայում է դէպի Միտիսը): Ինչ ես աչքդ յառել դէպի գիշերային
խաւարը:

Սիւլէյման-խան. Մեռածներից վախեցիր, իսկ կենդանի
մարդկանցից—գնա, պահուիր Մետեխում:

Ջէյնար. (Սարսափից դողալով) Մետեխում: Ինչո՞ւ Ինչ
մեռածների մասին ես խօսեմ:

Սիւլէյման-խան. Ես սնուել եմ Արաքստանի անապատ-
ներում. ես նուաճել եմ Սինդն ու Ջերալը. ես նամազ եմ կա-
տարել Իսլամի ջրով՝ առաջ քան Իսլամի սուրը մտցրել եմ
կովկասի սահմանները: Իմ հոգին միշտ սովոր է եղել շշնջալու
ինձ. —Սիւլէյման, զրախաւորիր, սաղաւարտ դիր գլուխդ, ձեռք
առ մերկացրած սուրդ—թշնամիդ մօտ է—նա այնտեղ, լեռների
ետեւն է, նա պահուած է գետերի թփուտներում, նա փռուած
է անապատի աւազներում: Եւ քանի դեռ ես սոսկ զինուոր
էի, իմ հայեացքը խաւարն էր թափանցում, իմ ականջը չոր-
ցած տերեւի խշշոցն էր լսում և, որպէս բազէն բարձրից, ես
նետում էի թշնամիներիս գլխին: Իսկ հիմա քսան տարուայ
հանգիստը բթացրել է ինձ: Ես վտանգ եմ զգում, բայց թէ
Բնէ տեղ է, մը կողմից է նա գալիս—չգիտեմ: (Ձախ կողմից,
պատշգամբից, Ռուքայայի ձայնը՝ «դաւաճանութիւն, տէ՛ր իմ,
դաւաճանութիւն»: Սիւլէյմանը Ռուքայայի ձայնը ճանաչելով՝ մ.կէն
շտկում է, ասես, օձից խայթուած, եւ հասկանալով բանի էութիւնը,
բռնում է Ջէյնարի ձեռքից):

Սիւլէյման-խան. Օ՛ձ:

Ջէյնար. Գտնուեց: Ահա նա: Նա իմ կորուստն է փափա-
գում: (Ներս է մտնում Ռուքայան):

VII

Ռուքայա. (Վրան եսփնջի ձգած, գլխից բաշլըղը պոկելով՝ մազերը թափուում են երեսին ու ուտերին) Տէր իմ, ես ժամանակի՛ն հասայ։ Ես փրկեցի՛ բեզ... Թագունին թեզ դաւաճանել է։

Ջէշնաբ. (Ուժալից, աշխատելով ժամանակ շահել) Դաւաճանութիւնը քո մէջ է, անամօթ ստրկունի։ Զրպարտութեամբ ես ուղում քողարկել քո անառակութիւնը։ Ի՞նչտեղ է քո սիրեկանը։ Ո՞ւմ հետ էիր փախել։

Ռուքայա. (Կատաղի) Իմ սիրեկանը։ Նա ինձ հետ է։ (Նետուում է դէպի պատշգամբ եւ արագ թափով դուրս քաշելով՝ առաջ է բերում էրեկէին)։ Ահա նա։

Ջէշնաբ. (Գեմամբողկային ուժով դուրս է պրծնում Սիւլէյմանի ձեռքից, նետուում է դէպի որդին եւ մի երկար ու խոր մտախնայով երեսի վրայ փուռում է գետին)։

Ռուքայա. (Հիւալով) Հիմա էլ ոչ մի բանից մի վախենար, տէր իմ։ Ես հետամուտ եղայ աղուէսին... ես հազիւ-հազ կարողացայ ներս մտնել այստեղ... Անթիւ, անհամար ամբոխ է շրջապատել բերդը... Նրանք բոլորովին մօտ են պարիսպներին... Նրանք թաքնուած են լեռներում... քաղաքի կտուրների վրայ... Նրանք ամեն տեղ են։ Նրանց նշանն է՝ «Թափառական Սաբա»... Առանց այդ խօսքերի... (Նրա ձայնը կտրուում է)։

Սիւլէյման-խան. Ո՞վ է այս մարդ... (Նա խորը նայում է եւ քայլ առ քայլ հտ-հտ է քաշուում, ասես, տեսիլքի առաջ) Մեռեհները կենդանանում են։

Ռուքայա. Սա քո հաւատարիմ ծառան է։ Սա մատնեց ամենքին։ Սա պիտի պայթեցնէր Մետեխը։ Սրան սպառնանքով հարկադրում էին. սրան խաբել էին, ասելով թէ ինքը թագաւորի որդի է... Բայց ես ասացի—փախչենք թագաւորի մօտ, պատմենք նրան բոլորը, նա կը վարձատրէ բեզ...

Սիւլէյման-խան. (Սթափուելով, արագ քաշում, բարձրացնում է յատակից Ջէշնաբին) Սա քո որդի՞ն է։

Ջէշնաբ. (Մարած ձայնով) Ո՛չ։

Ռուքայա. (Էրեկէին) Լսում ես։

Էրեկէ. (Կատաղի) Ո՛չ, արքայ, ես ընկեցիկ եմ։ Նրանք ինձ պահել, մեծացրել են, որ յետոյ ոչնչացնեն... Ես ընկեցիկ եմ։ Ես մատաղ բերուած ոչխարի պէս, արիւնաբամ լինելով՝ նրանց ոտքերի տակ պիտի ընկնէի... Եւ Օթար-բէկն ընկեցիկի գլխին պիտի յենէր իր ոտքը՝ քո գահը բարձանալիս...

Ռուքայա. (Արագ շարժումով դուրս հանելով նրա ծոցից վառօղի պատրոյգը) Նայիր, տէր իմ, ահա ի՞նչ է առել սրան քո հաւատարիմ Ջէշնաբը։ Քո ոյժ ու նեցուկ Մետեխը օդը կը թռչէր։

եթէ ես չԹափանցէի նրա խարդախ սիրտը: Ե՛ս քեզ փրկեցի:
Սիւլէյման-խան. Զէյնաբ, ես բարձր եմ կանգնած: Ին-
ձանից էլ բարձր—իշխում է Աստուած: Դաւաճանութիւնն ըն-
կած է ներքևում: Թո՛ղ նա ինձ տապալէ, եթէ կարող է: (Նա-
յում է նրան): Հիմա ձի պիտի ձեզ փրկէ:

Զէյնաբ. Սիւլէյման արքայ, ի՛նչ եմ անում ես հիմա
փրկութիւնը: Դու տեսնում ես, ձի է ինձ մատնողը... Ի՞նչիս
է պէտք փրկութիւնը: (Երկկէին՝ մեղմ ու անպատմի վշտով): Այո՛,
դու իմ որդին չես, այո՛: Ես ուզում էի քեզ ոչնչացնել... Բայց
քո հայրենիքը... քո եղբայրները... Ո՞ւշը քո անարդ կրօնին...
միթէ՛ այդ ամենը... այդ ամենը դու կարողացար դո՛ւ բերել
սրա փաղաքշանքներին... և այն մարդու շնորհին, որը քո երկ-
րի արիւնը ծծեց... Իմանում ես—ի՛նչ արիւր դու: Ո՛հ, լաւ է,
որ մեռնես և չիմանաս: Իմանում ես—ի՛նչ արիւր: Դու արե-
գակը հանգցրիր, երբ նա ծագելու վրայ էր: Դու անլոյս, մըշ-
տախաւար գիշեր ստեղծեցիր քո հայրենիքի համար:

Էրեկէ. Ռուքայա: Իմ միտքը պղտորւում է... Ռուքայա:
Սա ճշարտութեան ձայնն է:

Ռուքայա. Ես փրկեցի քեզ, տէր իմ:

Սիւլէյման-խան. (Զէյնաբի ընկճուած տեսքով զուարճացած).
Զէյնաբ: Մն է քո վրիժառուն: Դու իմանում ես ընտրութիւն
անել: (Գէպի դուրս). Հէյ, պահակներ: Օթար բէկին բռնեցէք և
խսկոյն ինձ մօտ բերէք: Ոտքի հանէք ամենքին... Յարձակուե-
ցէք... Կտոր-կտոր արէք Թագուհու ամբողջ զօրաբաժինը: (Ընդ-
հարում քմի կտելը: Սարսափելի աղաղակներ: Զէյնաբի շառչիւն):

Զէյնաբ. (Նստուելով դէպի երկկէն) Գէթ վերջին ամօթան-
քից ազատիւր քեզ: Գնա՛—այնտեղ քեզ համար են մեռնում:
Մեռիւր նրանց հետ: Օ՛, էլ մի ապրիլ: Մի՛ ապրիլ: Մարդիկ
չեն ներիւ քեզ... Կարելի է, քեզ Բրիտանոս... որին դու վաճա-
ռեցիր... որը աւազակին ներեց... Գնա՛. մեռիւր:

Էրեկէ. (Հեկեկալով) Ռուքայա:

Ռուքայա. (Ուշք չդարձնելով նրա վրայ) Ես փրկեցի քեզ,
տէր իմ:

Սիւլէյման. (Առաջից) Զէյնաբ: Աստուած հանաքի հա-
մար չէ ստեղծել երկիրը և ո՛չ էլ երկինքը—խաղի համար:
Նախ քան մեռնելը, դու նորից կը տեսնես այն ամենը, ինչ որ
տեսել ես քսան տարի առաջ: Ես կրկին անգամ ձիուս ոտքով
կը կոխկռտեմ որդուդ կուրծքը, բայց առաջ քո ժողովուրդը
պիտի իմանայ, թէ ինչպէս քո որդին ծախեց թէ՛ իրան՝ ժո-
ղովրդին և թէ՛ իր մօրը: Դու ես քո ժողովուրդն հաւաքել այս-
տեղ, դու էլ կը մօտեցնես վառօդի պատրոյգը ժողովրդիդ:

կրծքին ուղղած թնդանօթներին: (Պատուհանը լուսաւորուած է ար-
րինազոյն փայլով: Լսուած է խլացուցիչ պայթիւն: Երեւում են օդը թրո-
շող բեկորներ: Սարսափելի աղաղակներ եւ զէնքերի շառաչիւն: Ռուքայան
յուսահատական ճիչով՝ դուրս է փախչում):

Զէյնաբ. Անահիւ, Աստուած քեզ փրկէ:

*Էրեկլէ. (Նետուելով դէպի դուռը) Մայր, մի ներիւ ինձ, քա-
նի կենդանի եմ. աղօթի՛ր, երբ կը մեռնեմ: (դուրս է վազում):*

VIII

*Սիւլէյման-խան. (Սարսափից քար կտրած, նետուած է դէպի
պատը, ինչ տեղ որ զէնքեր են կախած, եւ ատրճանակ ու թուր է առ-
նում ձեռքը) Դէպի ինձ: Ալլահի զինուորներ: (Բոլոր դռների մէջ եւ
պատշգամբում կռիւ է սկսուած: Սրով ծանապարհ բռնալով՝ պատշգամբից
ներս է ընկնում Գաթօն եւ դէմառդէմ ելնում Սիւլէյմանին):*

*Դաթօ. Դայլ, դուրս եկ քո որջից: (Հարուածն՝ րի փոխանա-
կումից յետոյ, կուրծք-կրծքի տուած՝ կռուի են բռնուում):*

*Զէյնաբ. (Մի միջոցին, նախաբանում, ծունկ չորած) Օ՛հ, սուրբ
Աստուածածին: Քո խոցուած սրտին իմ ուղղում իմ աղօթքը:
Ի՛նձ վրայ բարձի՛ր նրա մեղքի լուծը, միայն ինձ վրայ: Մի-
այն ինձ վրայ: (Գաթօն վայր է ձգում Սիւլէյմանին եւ ծունկը դնում
է կրծքին: Նիւս են խուժում—Օրբելիանը՝ բարձրահասակ, ճաղատ ծի-
րունի. Սմ.ատը՝ սեւ ու ալիսառն միրուքով, միւս զօրավարները, զիւ-
ղացիներ: Սաբան ներս է մտնում՝ մի ձեռքին պաւազան, միւս ձեռքին՝
մերկայրած սուր: Կռուի աղմուկին միախառնուում է եկեղեցու զանգա-
հարուածն ձայնը: Զախ կողմից դուրս է վազում Գայեանէն. նրա նտիւ-
ից՝ Իսախարը):*

IX

*Աղաղակներ դռների մէջ. Բերդը մեր ձեռքին է: Նրանք
փախչում են: Թագուհուն փրկեցէք: Ի՞նչտեղ է Սիւլէյմանը:
Մահ Սիւլէյմանին:*

Գայեանէ. Դաթօ:

*Դաթօ. (Սիւլէյմանին ծնկի տակ պահած) Զօրավարներ, նա
իմ ծնկի տակն է:*

*Իսախար. Ճիւլի՛ր, ճիւլի՛ր դրան, ինչպէս դա քո եղբօրը
ճիւլեց: Զախջախի՛ր դրան, ինչպէս դա քո երկիրը ջախջախեց:
(Մօտենում է թախտի վրայ ընկած Սիւլէյմանին): Հիմա մեռած մահ-
կանը տեճո՞ւմ ես, անյաղթ Սիւլէյման: Նրա եղբօր ծունկն
է ճիւլում քո կուրծքը, ինչպէս քո ձիւ սմբակը ճիւլեց ան-*

մեղին, անյաղթ Սիւլէյման: (Մօտիկ կանգնած զինուորներից մէկի դաշտը խլիով): Թող քո արիւնն էլ այնպէս ցայտէ, ինչպէս անմեղի արիւնը ցայտեց: (Ուղում է դաշտը վրայ բերել):

Սարա. (Քոնում է նրա ձեռքից) Սպասիր: Ո՞վ կը վստահանայ Թամար Թագուհու ներկայութեամբ դատաւոր լինել այստեղ: Բաց թող դրան, պատանի: Հիմա դա վտանգաւոր չէ (Դաժօն հեռացնում է ծունկը: Կռիւր հետզհետէ դադարում է: Սիւլէյմանին կրկնաւորում են):

Օրբելեան. (Ձեռքը դնելով Սիւլէյմանի ուսին): Ես, Օրբելեանս, արքայական զինուորների ժառանգական զօրավարս, իմ ձեռքը դնում եմ յափշտակողի վրայ և առնում եմ նրա սուրը:

Սմբատ. (Պոկելով նրա զինից ապարօշը): Ես, Սմբատս, որ ժառանգական իրաւունքով Թագադրում եմ Թագաւորներին, պոկում եմ աւագակի ու սրիկայի գլխից այս պաճուճանքը և ձգում եմ ոտքիս տակ: (Ոտքով կիծորում է չլսման):

Ամբոխը. Կուրացրէք դրան: Կտոր-կտոր արէք կատաղի գազանին: (Սիւլէյմանն անշարժ կանգնած է՝ աչքերն երկինք ուղղած):

Սարա. (Պաշտպանողական դիրքով նրան պատասպանելով, բարձրաձայն) Սպասեցէք, այ մարդիկ: Սրա վիճակը Թագուհին ու Թագաւորը կը որոշեն:

Ամբոխը. Դատիր դրան, ո՞վ Թագուհի: Կեցցէ Թագածառանգ Գէօրգին:

X

Օթար-բէկը՝ (Վերաւոր եւ ուժասպառ՝ ուրիշների հետ միասին ձեռքերի վրայ ներս է բերում մահացու վէրք ստացած Հրեկէին):

Օթար-բէկ. (Ներդուելով) Թագուհի... քո որդին... սպանուած է: (Հրեկէին դնում են թագուհու ոտքերի տուօ: Թագուհին չի նստում որդուն: Ամենքը լուռ են):

Ջէյնաբ. Գճհ եմ քեզանից, ո՞վ Տէր:

Հրեկէ. Ներքը ինձ... մայր իմ... (Մեռնում է):

Ջէյնաբ (Լուռ ու մոռնջ խոնարհւում է որդու դիակի վրայ. երկար նայում է նրան: Ապա կամաց բարձրանալով, ծանրաքալ մօտենում է Սիւլէյմանին եւ կանգնում նրա առաջ՝ աչքը չհեռացնելով նրանից):

Սիւլէյման-խան. (Գլուխը բարձրացրած, վեր նայելով) Յաղթութիւնը քոնն է, Ջէյնաբ: Հրամայիր, որ ինձ սպանեն:

Ջէյնաբ. Քեզ սպանել: Միթէ քո յաղթութիւնից յետոյ՝ դու ինձ սպանեցիր: Դու կաթիլ-կաթիլ ծծեցիր իմ հոգին, իմ հաւատը, իմ պատիւը: Դու ամբողջ քսան տարի անարգում ու ոտքի տակ էիր տալիս իմ ժողովուրդն, իմ Աստծուն և այժմ՝

յաղթութեան և բերկրանքի այս ժամին, ես՝ թագունիս՝ այր-
ւում ու կարմրում եմ ամօթից և խայտառակութիւնից: Մի
հատիկ աստղ էր ինձ լոյս տալիս անթափանցելի խաւարում...
(Հեկկիանքներից ձայնն ընդհատում է): Մի նուիրական ժամի համար
էի ես շարունակ աղօթում Աստծուն անքնն գիշերներ... Մե-
ծանում ու զօրանում էր վրիժառուն խուլ ու յետ ընկած ան-
կիւնում, չքաւորութեան մէջ... Նւ ես տեսնում էի անյն փափա-
գելի ժամը, երբ պիտի ծունկ իջնէի նրա ոտքերի առաջ և նա
պիտի լինէր իմ խաբէութեան, իմ ամօթանքի դատաւորը...
Նա, իմ երկրի ազատարարը, իմ ժողովրդի թագաւորը, նա՝
անարատ ու անվեհեր... Նւ դու... քո պիղծ հարեմը... քո իս-
լամը... ստրկացնող և անողորմ... (Նրա ձայնը կտրւում է) խե-
ցիք... խեցիք իմ վերջին լոյսը... հանգցրիք իմ աստղը... Նւ
այդ ամենի փոխարէն՝ միայն մահ... Զօրավարներ և ժողո-
վուրդ: Սրա կեանքով վարձատրեցէք իմ բոլոր տառապանքնե-
րը. ինձ բաշխեցէք այդ կեանքը... (Տրտուն): Զօրավարներ և
ժողովուրդ: Վրէժխնդիր եղէք ձեր թագունու փոխարէն: Բայց
նչ մահով, նչ տանջանքներով: Ի՞նչ են տանջանքներն ու մահը
մոլեռանդի համար: Ո՛հ: Այս անյաղթին, հզօրին, այս զոռողին
ձգեցէք իր տիրոջ ոտքերի տակ, ձգեցէք ողջ-ողջ, յաղթում
անգժօր, ստորացած... Վզին լուծ դրած՝ սրան տարէք, տուէք
թշնամիների ձեռքը: Թող սա մասնակից չլինի այսօրուայ զոհ-
եալների փառքին... Թող ստրկութիւնն ու անարգանքը տան
նրան արժանի վարձը իմ կրած խայտառակութեան, ձեր ստրկ-
ութեան... սրա փառազուրկ մահուան համար: (Յոյց է տալիս
որդու դիտկը): Այսօր մեռած ձեր թագաւորը... իմ որդին... իմ
որդին: (Ընդհանուր տրտուն):

Սիւլէյման-խան. Քո որդին—դաւաճ...

Զէյնաբ. (Իշխանաւոր) Լո՛ւր, ստրուկ: Բնածին թագունին
չի խաբում իր ժողովրդին: Զօրավարներ և ժողովուրդ: Այս
սպանուած պատանին—իմ և ձեր թագաւորի որդին—դաւաճա-
նեց ձեզ: Ճշմարիտ է, նրան խաբել էին, բայց նա դաւաճա-
նեց: Նւ ես հրամայեցի նրան մեռնել—և նա մեռաւ: Թող, ու-
րեմն, երկուսիս միասին դատէ Աստուած: (Փոքրիկ խնջարով ի-
րան սպանում է: Զարհուրանքի ընդհանուր ծիւ եւ ապա մութլային լը-
ռումիւն):

Սաբա. Հանգչեցէք խաղաղութեամբ—դուք ձեր մեղքը
մահով յաղթանակեցիք: Զեզ սպասում է Տէրը երկնքում:

ՎԱՐԱԳՈՅՐ

